Co-funded by the European Union

EUROPEAN UNION

COUNCIL OF EUROPE

CONSEIL DE L'EUROPE

Co-funded and implemented by the Council of Europe

# Գործընկերություն հանուն լավ կառավարման

## Տարածաշրջանային ծրագիր՝ Արդարադատության հասանելիությունը կանանց համար. Եվրոպայի խորհրդի գենդերային հավասարության և կանանց նկատմամբ բռնության չափանիշների իրականացում

Այս ծրագիրը նպատելու է արդարադատության համակարգից օգտվել իս կանանց առջև առաջացող համակարգային խոչընդոտների դեմ պայքարին և դրանց հաղթահարմանը՝ և՛ իրավական և ինստիտուցիոնալ մարտահրավերների, և՛ սոցիալ-մշակութային խոչընդոտների, որոնք դրսևորվում են Արևելյան գործընկերության երկրների արդարադատության համակարգերում որպես գենդերային կողմնակալություն:

Ծրագիրն իրականացվում է Եվրոպական միության և Եվրոպայի խորհրդի «Գործընկերություն հանուն լավ կառավարման» համատեղ ծրագրի երրորդ փուլի շրջանակներում: Այն հիմնված է «Գործընկերություն հանուն լավ կառավարման» ծրագրի նախորդ փուլերի արդյունքների վրա՝ կանանց համար արդարադատության մատչելիության բարելավման և կանանց նկատմամբ բռնության դեմ պայքարի ոլորտում (Փուլ I 2015-2018թթ. և Փուլ II 2019-2023թթ.):

### Որո՞նք են ծրագրի նպատակները

- ► Ամրապնդել արդարադատության մատչելիությունը կանանց համար, հատկապես բռնության ենթարկված կանանց՝ այս ոլորտում Եվրոպայի խորհրդի չափանիշներին համապատասխան:

### Ովքե՞ր են ծրագրի շահառուները

- ► Բռնության ենթարկված կանայք.
- ► Դատավորները, դատախազները, փաստաբանները և քաղաքացիական հասարակության առաջնորդները.
- ► Կանանց նկատմամբ բռնության գործերով զբաղվող իրավաբանները.
- ► Լայն հանրությունը.

### Ինչպե՞ս է գործում ծրագիրը

- ► Համապատասխանեցված քաղաքականության/օրենսդրական, կարողությունների զարգացման և իրազեկության

### Ինչի՞ ենք ակնկալում հասնել:

- ► Արևելյան գործընկերության երկրների քաղաքականության և գործելակերպի փոփոխություն՝ ապահովելու, որ

բարձրացման գործողությունների համակցության:

արդարադատության շղթան ներառի գենդերային բաղադրիչը, հատկապես բռնության ենթարկված կանանց հարցում՝ Եվրոպայի խորհրդի և միջազգային չափանիշներին համապատասխան:

## Որքա՞ն է ծրագրի բյուջեն:

- Այս ծրագրի բյուջեն կազմում է 1 000 000 եվրո:
- Ընդհանուր Ծրագրի բյուջեն կազմում է 19,3 մլն եվրո (80%-ը համաֆինանսավորվում է Եվրոպական միության և 20%-ը՝ Եվրոպայի խորհրդի կողմից):

## Ինչպե՞ս ստանալ ավելի շատ տեղեկատվություն:

- Գործընկերություն հանուն լավ կառավարման ծրագրի կայք՝ http://partnership-governance-eu.coe.int/
  Էլ. փոստ՝ dpc_pgg@coe.int

## Որքա՞ն է ծրագրի տևողությունը:

- Ծրագիրը գործում է 2023 թվականի մարտի 1-ից մինչև 2026 թվականի փետրվարի 28-ը:

*«Գործընկերություն հանուն լավ կառավարման» ծրագիրը (ԳՀԼԿ) Եվրոպական միության և Եվրոպայի խորհրդի համատեղ նախաձեռնություն է, որն ուղղված է Արևելյան գործընկերության տարածաշրջանում լավ կառավարման ամրապնդմանը:*

*ԳՀԼԿ-ն երկրի կարիքներին հարմարեցված աջակցություն է ցուցաբերում Արևելյան գործընկերության երկրներին՝ մարդու իրավունքների, օրենքի գերակայության և ժողովրդավարության ոլորտներում իրենց օրենսդրությունն ու պրակտիկան եվրոպական չափանիշներին համապատասխանեցնելու համար: Այն աջակցում է, մասնավորապես, Արևելյան գործընկերության երկրների ներքին բարեփոխումներին՝ արդարադատության ապահովման, տնտեսական հանցագործությունների դեմ պայքարի, հավասարության, խտրականության դեմ պայքարի, կանանց համար արդարադատության մատչելիության բարելավման և կանանց նկատմամբ բռնության հաղթահարման նպատակով:*